

ՏԵՏՐ ԵՐՐՈՐԴ

ԲՈՎԱՆԳՍԿՈՒԹԻՒՆ. — Բանաստեղծութիւն (Թովմաս Թեր-
զեան). — Բնական գիտութեանց ուսումն (Բօլ Պէռ). — Հրա-
հանգիչ խօսակցութիւնն, Հիւլէ, Տարեր. — Կասուի մը յիշա-
գիրք. — Մասնոցին մէջ թնչ կար (Վիպակ).

ԱՌ ԱՋՆԻԻ ԵՒ ՍԻՐԵԼԻ

Ե. ԻՓԷՆՏԻ ՏԷՄԻՐՁԻՊՈՒՇԵԱՆ (1)

Ինչո՞ւ նայուածքդ անձկոս 'ի հող խոնարհես
Ով դու զոյր այս երկնահայեաց հասսեց Տէր.
Քեզ ի՛նչ հրապոյր կ'ընծայեն խորք անդնդոց
Որ զլստիկոր հոն նայելով կաս յեզեր:

Դու ասեցիր կեանքն. . է՞ր—զի մութ է եւ պաղ,
Եւ անօրէնն հոն կը սիզայ—եւ ճիւմարն՝
—Ձի աւելի ունի նմաններ — աւելի
Գտնէ մըտացն իւր համակիր մի աշխարհ:

Եւ յիշեցիր ըզ քնազաւառդ երկնային
Որոյ շողիւնք դեռ ցոլանան քո ճակսէդ .
Եւ ընդ սանդուղս վերելակեալ աստեղաց
Անէացեալ դրախտին խնդրես դեռ ըզհետ:

Հոն՝ անհունին մէջ՝ երկնագոյն աչերով
Թեւածող հուր ոգիք Թերես հծծեցին
Ականջդ 'ի վայր իրենց լիզուով հոգեզմայլ
Զիւրեանց նըրագս եւ ըզխորհուրդըս մըծին:

Եւ կարծեցիր՝ նշդեհացեալդ յերկրի ասս՝
Թէ լուսոյ բա՛ւ է երեւնալ որ պաշխ:

(1) Պէշիր Ֆուսս պէյի մահուան վրայ գրածին առթիւ .

Թէ իրաւունք երբ բարբառին՝ գլխիկո ր
Պիտի փախչի Ստուծիւն 'ի վիճ ոչնչի: —

Ո՛ր պերճ ցնորից 'ի գիրկ որբեալ պատանիդ՝
Պատերազմի դաշին վըրայ խոնջ ինկած
Ապագային դեռ երազուած 'ի սահմանս
Կանխես թեւօք հսկայարշաւ քո մըսաց:

Որո՛ւ համար ուրեմն են խաչք, եւ որո՛ւ
Փըշեայ պըսակք. . . որո՛ւ համար են լուսանք,
Եւ անըստփոք յառանձնութեան արատուք,
Եւ ըսուեաց մէջ հրեշտակին հետ մըցանք:

Սուտերամարտն 'ի կրկիսի կարեվէր՝
Ձեռքով ծածկած գիւր խոց՝ այլ ինք կանգուն դեռ՝
Իւր բոլոր վիշտն ու յոյս ու վրէժ ամփոփած
Յանձարգման մէկ ժրպիտ՝ կ'իյնար կը մեռնէր:

Քո ալ դէմքէդ թող շիկնին թերթք վարդերու
Թէ եւ փըշերն 'ի խոր քո սիրքդ խոցեն,
Եւ մոլեգնեալ վըրայ խուժող հրոսերու
Արատուալից աչքերդ գերկին ցուցընեն:

Բայց դատալիք ըլլալ նետն՝ ոտնակոխ
Նահասակաց դրօշն եւ ըզուերք լէգէոն
Վշտաչարչար յառաջընեաց վեհագանց
Յարիագոյն անոյցնէն իւր գրկել . . .

Մարե՛լ մէկ ասքը մըրկալից երկնից մէջ
Տերեւասել վարդ մ'ի պսակէ աշնայնոյն . .
Լըռեցընել սոխակն յանօք անտառի
Ո՛վ անիրաւ ուանագորոյն քաշուծիւն:

Մեռնի՛ր . . մտնալ ու լռել. մահուան սեւ քողով
Ծածկելով գլուխն՝ առանձնանալ 'ի վիճ խոր.
Անձանօթին նոճիատունկ մուծ սամբէն
Անցնիլ երթալ անբարեկամ՝ գլխիկոր . . .

Քանզի սնոտի են յոյսք. անհաս են բաղձանք
Եւ երաշխէպք միայն ըստոյգ են եւ վիշտ,
Եւ մարդն ու Ասուած 'ի մեզ անհաշտ մըցանօք
Յաստեղց յանդունդ տարուբերեն ըզմեզ միշտ.

Բայց սրբելու չըկա՞ն այլոց արտասուք.
Չըկա՞ն վրճեր կարօս մեր մէկ նըշուլին
Չըկա՞ն վէրքեր դարմանելու եւ չըկա՞յ
Սիրս մը կարօս դեռ եւս աւաղ մեր ժպտին.

Բայց դադրեցա՞ւ արդեօք ամէն պատերազմ
Որ կարենայ փշրել մարտիկն ըզզէնս իւր.
Եւ հասա՞ւ մարդ յաւեհեաց հողն յոր դիմէր՝
Որ ռահահորդ այլ պէտք չըլլայ լուսասփիւռ :

Ո՛չ. — այլ արեան կայլակելով շիծք կողէն
Դէմքըն մտրկէն ձողեալ՝ քայց դրօշն 'ի ձեռին՝
Թող լրտեսէ նա զհորիզոն՝ մինչեւ Այգ
Յսսկի ներկէ բզհոզմածուփ ծալս նորին :

Նուիրական պարտոց լրման զօճուծիւն
Առաքինեաց երջանկուծիւն այս է լոկ.
Իսկ մըտայինն այն լուսապանծ որ ժպտի
Աշխարհէ խոնջ հոգւոյն՝ անզուսպ հրապուրօք՝

Քո հանճարոյդ ցոլմունք է այն ընդլայնեալ
Յանհունուծեան, եւ՝ յանկուցի՛չ Համբարու՝
Կը կոչէ զրեզ յանէուծեան սահմանս անդ
Սին ուանիրան ըստուերաց քոյր ըլլալու :

Իսկ դուռն այն՝ դուռն յոր սրտաբեկ կը բաղխես
Ընդ որ անցան այնքան հասօրք մեր հոգւոյն,
Այդ դուռն անձուկ եւ ցած ուր պէտք է սակայն
Որ խոնարհին ճակատք անգամ խոռխտագոյն.

Որոյ ետին՝ համակեալ նոյն պատանօք
Կ'անճեանան զօրեղն ուանգօր նոյնպէս լուռ,
Որոյ սեմոց վրայ աստանդեալ նոյն հողմով
Վարդ ու զափնոյ ճերեք զլորին գեհնասփիւռ,

Ո՞հ մեզ համար ալ՝ ի ժամուն կը բացուի.
Բայց երանի՛ր ում հոն դիմէ աչք յերկին
Եւ երբ ամէնք զինք հնչատոյզ կարծեն անդ՝
Կը ցոլայ իւր շիրմէն ճամանչ մ'երկնային:

ԲՕԼ ՊԷՌԻ

ՄԷԿ. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԸ (1)

Բ. Բնական գիտութեանց համար ուսուցման եղանակ, —
Վարժապետանոցին մէջ, — Նախակրթարանին մէջ :

2⁰ Նախակրթարանին մէջ. — Աւելորդ է ըսել թէ նախակրթարանի մէջ կարելի չէ մեկնիլ ընդհանուր, վերացեալ գաղափարէն, զոր մասնաւոր իրողութիւնք կը ստուգեն: Ընդհակառակն պէտք է յենուլ այն իրողութեանց զորս տղան կրնայ դիտել ու բաղդատել, եւ եւս քան զեւս ընդարձակ հանրացումներու միջոցաւ մանուկն աստիճանաբար առաջնորդել սկզբունքին, օրէնքին: Մակաժական եղանակ (methode inductive) գործածող դասատուին համար երկիւղ չը կայ սր վերացեալ, ցամաք, չափազանց արուեստական (technique) դասախօսութիւն մ'ընէ. բայց կրնայ ուրիշ թերութեան մէջ խնայ, այն է սնտալ մանրամասնութեամբ ընուլ դասն, արդէն գիտցած կամ սուսնձին դիւրաւ ուսանելիք բաներովն սլարապեցնել տղաքն: Նախակրթարանին մէջ պէտք է որ գլխութեանց ուսուցումն ըլլայ հաստատուն եւ լուրջ օրքան պարզ:

Օրինակ մ'առնենք, եւ տեսնենք թէ ինչպէս մարթ է մակաժական եղանակն ի կիր արկանել կատրի վրայ դասի մը մէջ, կատուն իբրեւ մակերի տիպ մ'առնլով: Դրէք կատուն տղայոց ձեռքն եւ իրենց դիտել սուէք ներքսածիգ եղունքներուն տարօրէն շարակարգութիւնն՝ այնպէս որ հանգստեան ժամանակ եղունքին ծայրն վեր ելած եւ ա-

(1) Շարունակութիւն եւ վերջ :


մեն շիտումէ ու մաշումէ պահպանուած է . տղայոց ցոյց տուէք կենդանւոյն ըրերին մէջ երկայն ու սուր ակուններն՝ որս բռնելու ծառայող , եւ ուրիշ ակուններ՝ հատու՝ որք մկրատի նման իրարու վրայ կը խաղան կտրելու ու պատառելու համար միան : Այսպիսի գործարանք եղած են պաշտօնի մը համար , զոր գտնելու դժուարութիւն չը պիտի կրէ տղան . եւ այս մասնաւոր դիտողութիւններէ հեշտիւ իրենց հանել ըմբռնել պիտի տաք մաակերաց ընդհանուր նկարագիրներն : Գործարանին ու պաշտօնին միջեւ եղած վերաբերութեան վրայ պնդեցէք : Գորան՝ իր շնչառութեան յաջորդական կերպերովն՝ ուրիշ օրինակ մը կ'ընձեռնէ ձեզ . իր միջավայրին պտտածելու համար գործարանաւոր մարմնոյ մը կրած բարեփոխութեանց ու կերպարանափոխութեանց օրինակն :

Եզրակացութիւն

Աւելի մի փախցնէք՝ տղայոց զիտել տալու համար այն հաստատուն վերաբերութիւնն ընդմէջ պաշտօնին ու միջավայրին , ընդմէջ գործարանին եւ իր պաշտօնին (կամ գործառնութեան), այսինքն իր վախճանին : Զգացուցէք մանկանց՝ ներդաշնակութիւնն ընդմէջ էակաց եւ բնութեան այն մեծավայելուչ կարգաւորութեան , ուր ամեն բան իր պատճառն ունի : Հոս ծանր խնդիր մը կը ներկայանայ մեզ : Դասատուն կրնայ աւելի հեռու երթալ . կրնայ իմաստուն կարգաւորութեան մը գաղափարէն բարձրանալ աշխարհի կարգադրիչի մը գաղափարին , Աստուծոյ մը գաղափարին :

Կարծիքներն հոս կը տարբերին : Բազում մեծի-

մաստ անձինք, մեծահռչակ գիտունք, եւ առաջինըն ի գիտունս՝ կենդարանական ընդարձակ հանրացմանց նախաշարժիչն Տարուին՝ հաստատական պատասխան կուտայ: Այլք չեն համարձակիր հաստատել եւ ոչ ժխտել. անկեղծօրէն ու պարզօրէն իմ կարծիքս յայտնելով, ես ի դոցանէ եմ. կը սպասեմ: Ամեն պարագայի մէջ, վրիպանք չէք գործեր ուսուցանելով նախակրթարանին մէջ թէ աշխարհ կարգաւորեալ է որպէս թէ կարգաւորիչ մ'եղած ըլլար:



Հ Ր Ա Շ Ա Ն Գ Ի Զ Խ Օ Ս Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Դ. ՇԻՒԼԷ՛, ՏԱՐԵՐՔ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. — Տե՛ս, մեծ նմանութիւն մը չը կայ սա քառաթեւ խաչին ու չորս տարերքներուն մէջ: Խաչափայտին չորս թեւերուն վրայ հիմնուած է քրիստոնէութիւնը՝ ամենէն ճշմարիտ ու վսեմ կրօնքը: Արարչութիւնն ալ հաստատուած է չորս տարերքներուն վրայ, որոնց մէկն որ չըլլայ, գէշ բան կ'ըլլայ:

ԱՏՈՄ. — Ատոր կ'ըսեն Մեծ պահոց խմաստասիրութիւն: Շիրկանն ու մաթն (քահիկն, պիմեկզ) իրարու խառնելու վարժուեցար. խաչն ու տարերքը, քրիստոնէութիւնն ու բնալուծութիւնն ալ իրարու կը խառնես: Զմանք այդ բաներն, եղբայր: Վար՛ Յխուռսիի սկիզբն ալ Էռնէսդ Ռընան կը յիշէ բնալուծութիւնն. այլ բնալուծութեամբ. . . կը քանդէ քրիստոնէութիւնը. «Պատմութիւնը գիտութիւն մ'է բնալուծութեան նման, երկրաբանու-

Թեան նման» (E. Renan, Vie de Jésus) : Անջատէ՛ բարեկամ, Քրիստոսն ու Լավութիւնն : Արդարեւ երկուքն ալ գլխատուեցան, երկուքն ալ նահատակուեցան, եւ երկուքն ալ են պաշտելի : սակայն երկուքին գործն յոյժ տարբեր է :

Հ. — Լավութիւնն ո՞վ է : Ատանկ նահատակ մը գտնուիլը ձենէ կը լսեմ կոր : Անունը ս՞ր օրացոյցին մէջ կայ :

Ա. — Օկիւտդ Գօնդի օրացոյցին մէջ, զոր ցոյց պիտի տամ քեզ, երբ խօսինք Դրական Իմաստասիրութեան հիմնադրին վրայ :

Հ. — Օկիւտդ Գօնդ. կարծես թէ լրած եմ այդ անունը. Մանգրումին մէջ Գօնդ-Պէյ մը կար, ան է արդեօք : Բայց ինչ է նէ. սա Քրիստոսի հետ յիշած անձդ տեսնենք ընտո՞ր մարդ է : Ո՞վ է Լավութիւնն, ի՞նչ ըրած է մարդկութեան :

Ա. — Լավութիւնն հաստատած է թէ քու չորս տարերքդ տարերք չեն : Ճշմարիտ տարերց կամ պարզ մարմնոց թիւը վաթսուն-եօթանասունի կը հասնի :

Հ. — Ինծի՞ պիտի կլլեցնես : Հրամանքդ ինծի աղէկ նայէ : Ես փիլիսոփայութեան գիրք մը կարգացի՛ որ այդ գիրքին մէջ քու Լավութիւնիդ անունն անգամ չը կայ, ո՞ր մնաց անոր փիլիսոփայութիւնը : « Չորս տարերք կայ » ըսող փիլիսոփաները ի՞նչ մեծ մարդիկ են. մտիկ ըրէ՛ մէյ մը. « Սմա յաջորդեաց Անաքսագորաս կըսուենացի, որ միտք ասացաւ՝ վասն քան զամենեսեան յայտնադոյնս խոստովանելոյ միտս իմն աստուածային, տիեզերաց յօրինիչ : Չամենայն ինչ միախուռն ասաց լինել ՚ի սկզբանէ, եւ մտացն որոշել զնոսս եւ յարդարել »

համահաւաքեալ զնմանաւոր մասունսն, որ հրեղէն, որ օդային, որ ջրական եւ որ հողեղէն. զոր եւ նմանամասունս անուանակոչեաց:» Ասջափս կ'օգտէ: Նայէ՛, գիրքն ալ գրաբար է. սուտ մուտ բան չը կայ մէջը, հասկցածս սխալ է. Անաքսագորաս կը զգովենացի պզտիկ փիլիսոփայ է. քիչ մը վարը կարգամ, տես ինչ կ'ըսէ գիրքը. «Վարդապետ եւ մատերիմ Պերիկլի»: Իմացա՞ք. «որ հրեղէն, որ օդային, որ ջրական եւ որ հողեղէն»: Ահա չորս տարերքը. «միտս իմն աստուածային», աստուածային միտքը ստեղծեր է ասոնք, եւ ամեն բան անոնցմէ կը բաղկանայ:

Ա. — Հի՞ն բան կ'ուզես: Անցեալ օր բաւական լսեցիր. Անաքսագորէն հնազոյն Հնդիկ խնաստասիրաց կարծիքն իմացար, կարծիք՝ ուր կը գտնէի քարոզած խնաստասիրութեանս հիմունքն: Հիմայ հետագայն ալ մտիկ ըրէ: Նուիրակասն արուեստիս վրայ Թուղթ Իսխի՛ քագուհւոյն եգիպտացոց ու կնոցն Ոսխիսի առ ողիկն իւր Հորոս. Այս է գրքին անունն: Հիմայ կարգամ. «Կերզնում երկնից վըրայ, երկրի վրայ, լուսոյն վրայ, խաւարին վրայ. կ'երզնում հուրին վրայ, օդին վրայ, ջուրին վրայ եւ հողին վրայ:»

Հ. — Տեսա՞ր մի, հուր, օդ, ջուր, հող հող ալ կայ:

Ա. — Մտիկ ըրէ. «Կ'երզնում երկնից բարձանց վրայ, երկրի խորոց եւ Տարտարոսի վէին վրայ. կ'երզնում Հերմէսի վրայ եւ Անուբիսի վրայ. Քերքուրօսօրոս փշապին հաջիւնին վրայ, եւ եռագլուխ շան, դժոխսց սրահապան կերբերոսին վրայ. կ'երզնում երկից Պարկայից վրայ, եւ մենեայց եւ ի-

րենց սրոյն վրայ, ոչ ումեք յայտնել ոչ մին այս
խօսքերէն՝ բաց ի իմ ազնիւ ու սիրելի զուակէսս :

Հ. — Ի՛նչ բաներ կային հին ժամանակն ալ. ու
մէկ մասին՝ մեր ժամանակը որքան աղէկ է հին ա-
տենուան վրայ : Հիմայ ուզածդ սորվէ. մարդ քե-
նէ բան մը չը պահէր. դպրոց, համալսարան, մա-
տենագարան, թանգարան, լուծարան, ամեն բան
ամենուռն սովեւ բաց են այսօր : Մարդու բան չը
սորվեցնելու երդում կ'ընէին հին ատենը. հիմայ եր-
դում կ'ընեն որ բանիւ ու գրով ժողովրդեան բան
պիտի սորվցնեն :

Ա. — Բաղդատու թիւնդ շատ լաւ է. դիտո-
զութիւնդ շատ իրաւացի : Բայց ինձ լսէ, կարեւ-
որն հոս է : Սոյն երդման ձեւէն յետոյ, Իսիս՝
խօսքն ուղղելով Հորոս որդւոյն՝ կ'ըսէ. « Այժմ,
որդեակ իմ, գնա՛ դասի՛ր հոլագործն, եւ հարցնուր
իրեն թէ ի՛նչ է հունձքն : Իրմէ պիտ'ուսանիս թէ
ո՞վ որ ցորեն սերմանէ՝ ցորեն պիտի հնձէ, ո՞վ որ
դարի ցանէ՝ դարի պիտի քաղէ : Այս բաներն, որ-
դեակ իմ, զքեզ պիտ'առաջնորդեն ստեղծման
(création) ու սերման (génération) գաղափարին, եւ
յիշէ՛ թէ մարդն զմարդ կը ծնի, առիւծն առիւծի
ծնունդ կու տայ, շունն ալ շուն յառաջ կը բերէ :
Այսպէս ալ ոսկին ոսկի յառաջ կը բերէ, եւ ահա
բոլոր գաղանիքն : »

Հ. — Ստիկաց ես ալ դիտեմ. բարան բարա կը
բերէ :

Ա. — Բայց քու չը գիտցածդ նիւթին նոյնու-
թիւնն է, որ կը հաստատուի վերագրեալ տուերուն
մէջ : Նուիրական արուեստին արուեստաւորաց,
խորհրդագիտաց (initiés) համար, քարինք ու մե-

տաղք՝ գործարանաւոր էակներ էին, որք իրար յառաջ կը բերէին եւ կը բազմապատկուէին կենդանեաց ու բուսոց նման: Կ'ուզէս որ շարունակեմ ընթերցումս. կ'ուզէս դիտնալ թէ ինչ է մեծաշխարհի ու փոքրաշխարհի տեսութիւնն (théorie du macrocosme et du microcosme):

Հ. — Կարգացէք. հետաքրքրաշարժ բան է այդ գիրքը. խորհրդաւոր է. կ'ախորժիմ:

Ս. — « Հերմէս փոքրաշխարհ... »

Հ. — Կը ներէք. Հերմէսն ո՞վ է:

Ս. — Հերմէս Եռամեծ (Hermès Trismégiste) գրքին հեղինակն է, միանդամայն եւ հեղինակ սոյն տարօրինակ տեսութեան: Երկրայիններու մեծագոյն հեղինակութիւնն էր Հերմէս: Կը շարունակեր ընթերցումս. « Հերմէս՝ փոքրաշխարհ կ'ամուսնէ մարդն, որովհետեւ մարդը կամ փոքր աշխարհն (ὁ μικρὸς κόσμος) կը բովանդակէ ինչ որ կը սարուկէ մեծ աշխարհն կամ մասրակալմն (ὁ μέγας κόσμος): Այսպէս մեծ աշխարհը կը սարունակէ փոքր ու մեծ կենդանիներ հողային ու ջրային. մարդս ալ ունի լուեր եւ ոջիւններ՝ որք իր հողային կենդանիներն են, եւ ունի որովայնի սրդեր՝ որք իր ջրային կենդանիներն են: Մեծ աշխարհն ունի գետեր, աղբիւրներ, ծովեր. մարդս ունի առուներ, ալիքներ, երակներ, ընդունարաններ: Մեծ աշխարհն ունի օդային կենդանիներ. մարդս ունի միջուկներ եւ սրիչ թեւաւոր ձկներ: Մեծ աշխարհն ունի սգիներ որք կը յառնեն, որպէս են հողմունք, շանթիք, փայլատակմունք. մարդս ալ ունի փուք, ատեռ, տապաղին սենդեր, եւն: Մեծ աշխարհն ունի երկու լուսաւորներ, արեւն ու լու-

սին . մարդս ալ ունի երկու լուսաւորներ , աջ աջքն՝
որ կը ներկայացնէ արեգակն , եւ ահեակ աջքը՝
լուսինը : Մեծ աշխարհն ունի լեռներ ու բլուրներ ,
մարդս ալ ունի ոսկրներ ու միտեր : Մեծ աշխարհն
ունի երկինք եւ աստղեր . մարդս ունի գլուխն եւ
ականջներ : Մեծ աշխարհն ունի կենդանակերպին
տառներկու նշաններն . մարդս ալ այդ նշաններն
ունի ականջին խալիզոնէն ⁽¹⁾ մինչեւ ոտքերն , որք
կը կոչուին Ձկուռնի (խոյէն յետոյ եկող կենդանա-
կերպի նշանն) : »

2. — Բայց այդ կարգացած բաներդ ի՞նչ կը
յուցնեն . Անաքսագորաս փիլիսոփան կը ջրե՞ն :

Ս. — Բնալուծութիւնն Անաքսագորաս իմաս-
տասէրը կը ջրէ . եւ բնալուծութիւնն սկիզբն կ'առ-
նու Անաքսագորէն յետոյ , սակեփոխներու ժամա-
նակ , այց ամենէն մեծին գրուածն է որ կարգացի
ձեզ : Իր խորհրդաւոր ու տարօրինակ ձեւին տակ ,
սակեփոսութիւնը բնալուծութեան սկիզբաւորու-
թիւնն է : Նուիրական առաեւտ կամ նուիրական
գիտութիւն կը կոչուի բնալուծութիւնն յերրորդ կամ
չորրորդ դարուն ֆրիստոսի , ուր ծագում կ'առ-
նու՝ դիցապաշտութեան ու քրիստոնէութեան պայ-
քարներուն մէջտեղ , երբ բոլոր գաղտնիք՝ երկար
ժամանակ ժողովրդէն ծածկուելէ յետոյ՝ վիճաբա-
նութեան կ'ենթարկուէին եւ կը հրապարակուէին :
Խորհրդագէտք՝ գողցես գուշակելով թէ բնալու-
ծութիւնն ինչ մեծ ծառայութիւններ պիտի մատու-
ցանէր իմաստասիրութեան եւ ընդհանուր քաղա-
քակրթութեան՝ նուիրական , աստուածային կ'ա-

(1) Խալիզոն , յունարէն Κριός , կը նշանակէ նաեւ խոյ ,
որ Զոդիակոսի կենդանեաց մին է , գարնան նշանն :

նուանեն զայն : Մինչ հին իմաստասէրք մտածելով
կը շատանան , ոսկեփոխք կը վառեն քուրան , հոն
կը դնեն ու կը հալեցնեն մետաղներն , ուրիշ իրմիս
(chyique, chimie) անուեն ալ՝ որ յայտնապէս կու
գայ յունարէն չէօ կամ չէնօ բառէն , որ թափեղ կամ
ծուելլ կը նշանակէ : Կը վառի քուրան , այր բոցերն
եւս կը գունաւորեն Մարիամ Հրէուհւոյն՝ այն ոս-
կեհեր ոսկեփոխուհւոյն սյտերն : Հոն , հալոցին մէջ
մետաղք կը լուծուին , կը տարբազադուուի նիւթն ,
եւ անոնք որք սյտապէս կարող կ'ըլլան աւելլի ներք-
նապէս ճանաչել նիւթն , այո՛ , կը հռչակեն նիւթին
նոյնութիւնն : « Նոյն են մարդն ու աշխարհն » ը-
սաւ Հերմէս այն հասուածին մէջ՝ զոր ձեղ կար-
գացի . հանքսցին անգործարանաւոր բնութիւնն
նոյն է գործարանաւոր կենդանի բնութեան հետ :
Նիւթն զնիւթ կը ծնանի՝ Հերմեսեան իմաստասէ-
րին համար . Կլազոմենացի իմաստասէրն սյտապէս
ահա կը ջրուի : Միտ կոչուեցաւ նա , « Պէրիկղի
վարդապետն » . Աիւք կը կոչուի նոր իմաստասի-
րութիւնն , Լեւկիպպեան իմաստասիրութիւնն , որ՝
աւելլի փայլուն ու յաղթական կ'երնէ ոսկեփոխին
հալոցէն : Դու տարերք կ'անուանես օդն՝ Անաքսա-
գորասին հետ . Զօզիմ կը գանձ այդ տարերքը բազ-
կացնող տարերց մին , քրուածինն (oxygene) ,
« պղնձին հոգին , օդակերպ մարմինն , որ կը վերա-
ւլանայ » :

Հ . — Հիմայ այդ մարդիկը Անաքսագորաս փի-
լիսոփայէն վեր դրիր , Պերիկղէսի վարդապետէն
ու մտերիմէն :

Ա . — Անտարակոյս : Սոքա վերացական տե-
սութեամբք չեն շատանար , կը փորձարկեն ալ :

Միտքն առանց փորձարկութեան կը մտորի: Փորձարկութեան հետ կը սկսի գիտութիւնն, եւ ամենէն ճշմարիտ իմաստասիրութիւնն այն է որ գիտութեան վրայ հիմնուած է: Այն, բարեկամ, նոր իմաստասիրութեան համար նիւթ կայ միայն, եւ նիւթն է մի եւ կենդանի: Բնաշուծութիւնը կը վերլուծէ մարմիններն եւ ամենուրեք կը գտնէ նիւթն, ամենուրեք կը գտնէ հիւլէն կամ աստլն: Ատամ, յունարէն *ατομος*, կը նշանակէ բան մը որ չը բաժնուիր, որ չը բաժնուիր մասանց: Անաքսագորի համար չորս տարերք կան, այսինքն չորս անբաժանելի նիւթեր. եւ ահա բնաշուծութիւնը կը հաստատէ թէ այդ անբաժանելի կարծուած նիւթերը բաժանելի, լուծելի են, թէ այդ տարերք համարուած մարմինք տարերք չեն: Այն, Հալուազկէ հոչակեց թէ օդը բնաւ պարզ մարմին մը չի եւ կը բաղկանայ առողջարար մասն մը եւ անշնչելի կազն մը: Այս հաստատութիւնն յեղափոխութիւն մ'եղաւ գիտութեան համար, իմաստասիրութեան համար. այս հաստատութիւնը բնաշուծութեան ՏՅն եղաւ, որպէս կ'ըսէ այն հեղինակը՝ զոր գլխաւոր առաջնորդ ունիմ մեր այսօրեայ խօսակցութեան մէջ: Օդ, ջուր, հող, հուր, սէ, տարերք չեն, պարզ մարմիններ չեն. այսօր պարզ ճանչցուած մարմնոց թիւն՝ որպէս բոլի կ'անցնի վաթսուեն: Հիւլէն տարրի մը կամ պարզ մարմնոց մը փոքրագոյն մասն է, որ անբաժանելի կամ սյլ եւս չը բաժնուօղ կը նկատուի. *անγοΐου*, *ս(ոչ) դիմնιο* (հատանեմ):

Հ. — Հիմնոց օդին մէջ ալ հիւլէ կայ: Ո՞ր է ձեռքս գոցեմ ու թո՞ղ հիւլէ բռնեմ:

Ա. — Ընդհակառակն, երկու ձեռքերդ բաց

ու գլուխդ բռնէ . որովհետեւ , բարեկամ , գլուխդ . . .
չառ տկար է : Ա՛լ համբերութիւնս հատաւ : Սա-
կայն . . . իրաւունք չունիմ այսպէս խօսելու , յան-
ցաւոր եմ զձեզ մեղադրելուս համար . պէտք էր յիշէի
թէ մարդկութեան համար ալ նոյնն եղած է ինչ որ
քեզ համար : Հիներն աննիւթական կը նկատէին օ-
դը , մթնոլորտը . « երկնային նիւթ » էր այն , « ազատ
ամեն զգալի նիւթէ » : Սակայն Արիստոտէլ բամ-
բուշտ մ'առաւ , օդով լցոյց զայն , եւ հաստատեց
թէ օդով լցուած բամբուշտն առելի ծանր է : Եմ-
պեղծողէս ալ Արիստոտէլն յառաջ՝ կը խօսի « ծան-
րութեան վրայ օդոյն , որ մեր թոքերէն ներս կը
հոսէ » : Սոքա հազուադիւրս մտքեր են : Որքան հին
խնամասէրներ , այ՛ն , աննիրք կը նկատեն օդն :
Այսպէս եւ դու դժուարաւ կ'ըմբռնես թէ օդը
մարմին է , երբ սակայն օդն՝ ըստ Սենեկայի բա-
ցատրութեան՝ ըզքեզ կը սրարուրէ , կը սրարարէ , որ
քեզ հետ մի մտարմին է : Եթէ Արիստոտէլ յառ-
նէր . . . :

Հ . — Ո՛ւր է , ադ հրաշքը գործուէր . Արիս-
տոտէլ լրումն փիլիսոփայութեան է . վարդապետ-
ները անգամ Արիստոտէլը կ'ընդունին :

Ս . — Եթէ յառնէր Արիստոտէլ , եւ ձեռքդ
տար օդով ուռած բամբուշտն , ի՛նչ պիտ'ընէիր .
ձեռքդ չը պիտ'առնէիր . « ծանրութիւն չունի՞ »
պիտ'ընէիր : Ոչ : Արդ , ծանրութիւնն նիւթին յառ-
կութիւնն ըլլալով , օդն՝ որ ծանրութիւն ունի՞
ի՛նչպէս աննիւթ կ'ըլլայ :

Հ . — Հիմայ գլուխս խօթեցիր . ա՛լ ըսելիք չու-
նիմ :

Ս . — Ամեն ըսածներս ալ , ամեն ըսելիքներս

ալ ուրեմն պիտ'ընդունին : Անաքսագորոսին հա-
կառակ' պիտ'ընդունին թէ նիւթն ինքզինք կ'ար-
տադրէ, ինքզինք կը ստեղծէ . . . :

Հ. — Այդ լինչպէս կ'ըլլայ. խելքս ատոր չը
հասնիր կոր :

Ա. — Որպէս զի կարենանք ամեն բան հա-
կընալ, ամեն բնական ու բնալուծական երեւոյթ
բացատրել, երկու բան, երկու հիմնական գաղա-
փար պէտք է ընդունինք :

Հ. — Նայինք, խելքերնիս հասնի նէ, ընդու-
նինք :

Ա. — Արդի գիտութիւնն ընդունած է զայնս,
եւ գիտութենէ դուրս բանդազուշանք միայն կայ :
Գիտութիւնն այսօր, այժմ, կ'ընդունի՝

Առաջին. թէ բոլոր նիւթն, որ իբր կշռելի
ճանչցուած է մենէ, կազմուած է պարզ մարմնէ
մը, որ ինքն ալ կը բաղկանայ անբաժանելի հիւ-
լէներէ, այլեւայլ կերպով միացած եւ անդադար
չարժման մէջ :

Երկրորդ. թէ կշռելի (pondérable) նիւթին հիւլ-
ներն առկախ են նիւթական անկշռելի (inpondérable)
միջավայրի մը մէջ, որ եթերն է, եւ որ կարող է
չարժման մէջ գրուիլ կշռելի հիւլէներէն եւ ինքն
ալ իր կարգին յառաջ բերել կշռելի հիւլէներու
չարժումն :

ԿԱՏՈՒԻ ՍԸ ՅԻՇԱԳԻՐՔ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԸ

Շնորհիւ իրիմեան Հայրիկի՝ Մեծ պահոց մէջ
վարագոյր բացուեցաւ. շնորհիւ Գուրգէն էֆէնալի՝

Մեծ պահոց մէջ պարզեւարաշխութիւն կատարուեցաւ : Բայց այս երկու շնորհիւներն իրարու կպելու մէջ մեծ անշնորհիւրքիւն մը չը կայ միթէ . Խրիմեան Հայրիկէն Գուրգէն էֆէնտին այնքան հեռուորութիւն կայ որքան արծիւէն արագիլ : Նոյնքան հեռուորութիւն կայ նաեւ Գարագաշեանի եւ Գուրգէն էֆէնտիի մէջտեղ . այդ պատճառաւ զայրոյթ կը զգամ, երբ ճաշակ ոսկեղէն դպրութեանի վրայ քովէ քով կը տեսնեմ այդ երկու անուններն՝ որք իրարու կը հայհոյեն :

Ես Հայկական կրթարանին ո՛չ քննութեանց ներկայ գտնուեցայ ո՛չ պարգեւարաշխութեան , թէեւ տշակերտաց նկատմամբ համակրանք ունիմ միշտ : Տիրոջս հետ իր բարեկամներէն միայն որդւոյն քըննութեան գացի : Երկուստանամեայ պատանեակ մ'է . հայրն ու մայրն՝ իր գլխաւոր ուսուցիչներն են , առաջին դաստիարակներն ըլլալէ զատ :

Քննութիւնն սկսաւ մայրենի լեզուէն : Տէրս բացաւ դիպուածով Աստուածաշունչն ու տուաւ վահէ Մկրտիչեանին (այս է պատանեկին անունն) ձեռք՝ որպէս զի կարգայ . «Եւ եղեւ ի ժամանակի ծերութեանն Սողոմոնի՝ եւ կանայք նորա խոտորեցուցին զսիրտ նորա զհետ աստուածոց օտարաց . եւ ոչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ . . . » Տղան ընթերցումն ընդմիջեց զարմանօք ու սոսկմամբ համակուած , եւ մօրն ուղղելով խօսքն , ըսաւ . «Մայրիկ , մենք միշտ Սողոմոն խնայուսուն կ'ըսենք . այս խնաստունը քանի՞ կին ունէր իր ծերութեանը մէջ ու քանի՞ աստուած : » Շուարեցաւ , չառագնեցաւ մայրն . առանց պատասխանի սպասելու , վահէ շարունակեց . «Ես եր-

բէք սիրած չեմ այս հրէից ազգը: Երէկ իրիկուն օրագրին մէջ երբ Գատը-դիւղի դէպքը կարդացինք, ա՛լ ծայրը հասաւ ատելութիւնս՝ կարծեցի. բայց ահա հիմայ ծայրը կը հասնի. Հրէից անունն անգամ մ'ալ բերանս չեմ առներ:» Եւ Տէրոջս դառնալով. « Ուրիշ բան տուէք ինձ թարգմանութեան ու վերլուծութեան համար, կ'ազաչեմ:» Տիրոջս ծոցն՝ Եղիշէ կար. հանեց. վահէ հիանալի յաջողութեամբ թարգմանեց ու լուծեց: Երբ գործն աւարտեց, Եղիշէն համբուրեց՝ մօրն ակնարկելով խանդաղատանօք. մօրմէն ուսած էր դասս. Ա՛հ, եթէ բոլոր Հայ մայրերն այսպէս դատարարակէին իրենց զաւակունքն. եթէ Նար-Պէյի Հայկազն մօր նման, Գրիգոր Նիկողոսեանի Հայ կնոջ նման ըլլային բոլոր Հայ մայրերն: Երանութեան արտասուօք լեցուեցան Տիրոջս աչքերն, եւ ինքն ալ համբուրեց եռանդաբին՝ հայրենասէր մանուկն:

Հարցուց տէրս վահէին թէ հայերէնէն յետոյ ս'ը ուսման վրայ քննութիւն տալ կ'ուզէր: Սիրուն պատանին վառվռուն աչքերն աշխարհացոյցի մը վրայ նետեց. « Երբ աշխարհացոյցն առջեւս առնեմ, կարծէք թէ պարտեզ մը կը մանեմ.» Ըսաւ աշխոյժ եղանակաւ. « Ծառ կը սիրեմ Աշխարհագրութիւնը, շարունակեց: Մայրս ալ շատ ազէկ դաս կու տայ, կարծես ոտքովս կը պտտիմ բոլոր այն գեղեցիկ երկիրները»: Համոզուեցայ թէ լաւ, բնական էր Ռաուլ Ֆռառիի առաջարկած դրութիւնն, որ կը կայանար բոլոր ուսումներն Աշխարհացոյցի կամ Երկրագունտի մը վրայ աւանդելու մէջ: « Է՛յ, տեսնենք ս'ը երկիրներէն ակտրժած ես ամենէն աւելի, սիրելի վահէ.» հարցուց Տէրս. « Իմ հայրե-

նիքէս յետոյ — պատասխանեց տղան — կը սիրեմ
Զուլիցերիան :» — « Երկիրը թէ բնակիչները . » —
— « Երկուքն ալ . երկիրը գեղեցիկ է , ժողովուրդը
աշխատասէր եւ ուսումնասէր . Ասիոյ մէջ երկիր մը
կայ , որուն շատ կը նմանի Զուլիցերիան . » — « Ա-
նոյշ զաւակ : Բայց ինձի կրնաս ըսել , Վահէս , այդ
երկրին ժողովուրդն որ երեք լեզուներով — « Այ-
սինքն Գաղղիերէն , Գերմաներէն եւ Իտալերէն »
— « Այդ երկրին ժողովուրդն որ երեք լեզուներով
իրարմէ կը բաժնուի Գաղղիոյ , Գերմանիոյ եւ Ի-
տալիոյ սահմաններուն վրայ գտնուելով , նիւթական
լինջ հզօր կապով միացած է յաւիտեան . » — « Այդ
երեք ժողովուրդները նախ բարոյապէս միացած են
յաւիտեան ազգային դաստիարակութեամբ՝ որ ա-
մենուն ալ նոյն ոգին կը ներշնչէ . նիւթապէս ալ
հզօր կերպով միացած են այն իրօզութեամբ թէ
տէր են Ալպեան գլխաւոր ճանապարհներուն : Ծայ-
րագոյն Արեւելից եւ արեւմտեան վաճառակա-
նութեան կեդրոնն եղող Անգլիոյ մէջտեղ միու-
թեան կապ մ'է Զուլիցերիան . ընդմէջ Իտալիոյ՝
որ ծայրագոյն Արեւելից ճանապարհն է , եւ Ֆուան-
սական , սելճիական , հոլանտական եւ գերմանա-
կան նաւահանգստոց՝ որոնք Անգլիա կը տանին ,
ուղիղ եւ արագանցիկ ճամբայ մը չը կայ որ Զուլի-
ցերիոյ մէջէն չանցնի : Այն բարձր լեռանց վրայէն
Նարթէոնի անցքէն աւելի չահաւէտ է անշուշտ շո-
գեկառաց անցքն այն բարձր լեռանց տակէն . Աէն-
կօթաուի , Սէմբլօնի , Մօն-Պլանի փոստըղիք՝ լու-
սաւորութեան այն մութ ճանապարհներն՝ ինչ ա-
ռաւելութիւններ կու տան Զուլիցերիոյ , միանգա-
մայն եւ համօրէն Եւրոպական աշխարհին . » —

« Կեցցենս, տղաս. այդ բաներն ինչպէս ուսար. »
— « Մայրիկիս մատին ծայրը կարդացի բոլոր ինչ որ
սորված եմ Աշխարհագրութեան մէջ. » — « Ա՛լ ա-
ւելորդ է քաղաքներու տեղերն հարցնել քեզ. աշ-
խարհագրութեան վերաբերեալ ուրիշ հարցում մը
ընեմ. Աշխարհագիրք — կամ որ նոյն է այս պա-
րագայիս մէջ — վիճակագիրք կը հաստատեն թէ
խմացական միջինն (la moyenne intellectuelle) ո՛չ ու-
րեք աւելի բարձր է քան Տանիմարքայի մէջ, եւ
թէ Գօբէնհակի գիտական հաստատութիւնք ճշմա-
րիտ տիպարներ են. պատճառն ի՞նչ է. ուսած ես
կամ կրնամ գտնել. » — « Կը տարակուսիմ որ կա-
րենայի գտնել, բայց մայրս ուսուց ինձ զայդ :
Մտաւորական բաներու համար այդ յանձանձանքն
ընդհանուր է բոլոր Սկանտինաւեան երկիրներու
մէջ. եւ այդ առաւելութեան պատճառն երկրին
կլիմային մէջ կը գտնեմք մասամբ : Այդ կլիմայն
դրսի աշխատութիւնն անհնար կ'ընէ տարւոյն մէկ
մեծ մասն, ուր Նորվեկիացի կամ Շուէտացի գիւ-
ղացին կը հարկադրուի տան մէջ փակուիլ մնալ :
Կլիման՝ այսպէս՝ կը նպաստէ ընթերցասիրութեան,
ուսուցմասիրութեան, այլ նաեւ գինեմոլութեան :
Բարեբաղդաբար այդ մոլութեան ընդդիմադործե-
լու համար հաստատուած օրէնք անարդիւն չը
մնացին : Նախակրթութեան մէջ Սկանդինաւեան
երկրաց զարգացումն այդ երկիրներու մէջ յառաջ
բերած է այն նախանձեղի դրութիւնն, ուր միշտ
ազդին ներկայացուցիչք ունին վերջին խօսքն Այս-
պէս չէ գեռ մեր ազգին մէջ, թէ եւ կը պարծինք
Սահմանադրութեամբ. . . : Կրթութեան տեսակետով
Սկանտինաւեան երկիրք մեծ առաւելութիւն մ'ալ

ունին ամեն երկիրներու վրայ . հոն արուեստական կրթութիւնն անբաժան է գրական կրթութենէն : Նախակրթարանին մէջ ձեռական աշխատութեան ուսուցման խնդիրն առաջին անգամ այդ երկրին մէջ գործնական կերպիւ լուծուեցաւ : Արդէն 1840 ին Ֆինլանտացի Ունո Սիկնաեւսը խնդիրն իր ճշմարիտ հողին վրայ կը դնէր հաստատուն կերպիւ , եւ քանի մը տարի յետոյ Շուետացի Օդդօ Սալօմօնը կը լուծէր զայն : Այսօր Շուէտի դպրոցաց իբր կիսուն մէջ կ'ուսուցուի ձեռական աշխատութիւն եւ քիչ ժամանակէն բոլոր վարժարանաց մէջ պիտի ուսուցուի : » վահէ , պահ մը կենալէ եւ վարանմամբ մօրն աչաց մէջ նայելէ յետոյ , ըսաւ ժպտագին . « Ես ալ Շուէտացի եմ . ես ալ սրոյջի երկրէն , փայտագործութեան երկրէն եմ . միայն գրելով ու կարդալով չեմ պարապիր . փայտով ալ , փայտագործութեամբ ալ , ի մի բառ արհեստով ալ կը ստանալիմ . եւ կը փափաքէի որ այս մասին ալ քննութիւն մը անցունէի : »

Տէրո՛ ի պատասխանի՛ պարզապէս համբուրեց խանդազատանօք վահէ Մկրտիչեանի ձակատն , եւ՝ իր մօրն յայտնելով իր ջերմագին ու բախակցութիւնները՝ դուրս ելաւ : Ոգիս ալ այդ սիրելի տունէն սկիւմայ հեռացաւ տէրօջս հետ՝ խորհելով Հայոց սոցգային կրթութեան վրայ , եւ կրթական կոչուած խորհրդոյն վրայ . . . :

Մ Ա Տ Ն Ո Ց Ի Ն Մ Է Ձ Ի Ն Ձ Կ Ա Ր

(Սերն իննեասաներորդ դարու մեջ)

Տես , Մերանիւ . ես զքեզ յաճախ կը փնտոնէի

միսիթարուելու արխանալու համար. եւ ես հար-
կադրուեցայ ուրիշ մը միսիթարել եւ արխանել . . .

Շուարեցայ. ինչ ընելս չը գիտէի. աղէկ չէր
սպասուհին կանչել. բարեբաղդարար ան ալ խոհա-
նոցին խորն ընկղմեր էր, եւ երգելով՝ բան մը չէր
ըներ մեր խօսակցութենէն. Պառպառայի նման՝ իւր
Ռոնենոյ երգը թերեւս կ'երգէր: Ես ալ քիչ մը
զովաջուր տուի վիզգօռիային, ու դաշնակին առ-
ջեւ նստայ. միտքս եկած զուարթ եղանակները
կ'ածէի, յիշելով ես ալ Հնդիկն եւ այդ առեղծու-
ծին վրայ խորհելով. խորհելով մանտուանդ այս հէգ
մանկամարդ կնոջ վրայ, որոյ . . . շահագրգիւս կա-
ցութիւնն հանդարտութիւն կը պահանջէր: Կար-
ծես թէ նոյն մասձու մը միասին ունեցանք: Տիկին
Մարգարեան ըսաւ՝ փոքր ինչ հանդարտած՝ թէ
մեղք պիտի ըլլար զաւկին, թէ մեղանչած էր ար-
դարեւ ընկերութեան դէմ՝ ամուսնանալով, մարմ-
նապէս, մանաւանդ բարոյապէս հիւանդ զաւակ-
ներ պիտի ունենար, եթէ ունենար:

«Բայց թէ ինչպէս ամուսնացայ, չըսի զայդ . . .»
ինքզինքն ընդմիջեց. «Գէորգին վրայ կը խօսէի.
ինչ գէպք կը յիշէի:» — «Օր մը՝ կ'ըսէիր՝ պար-
տէզն հովանեակին ասի առանձին մնացած էիք քա-
ռորդ մը . . .» — «Յառնորդ մ'էր. չը գիտեմ. շատ
երկար թուեցաւ ինձ այն քառորդն. եւ մէկ կու
մը հետ առանձին մնալ չի ուզեր բայց եթէ, ան,
իրեն հետ . . .: Երբ հովանեակը մտաւ, ճայնարկեց
քմծիճազով մը՝ Չիկ կրկնուր ըսել ինչ որ խօսեցաք:
Գէորդ եւ ես կարմրեցանք: Յանի մ'երկվայրկեան
կենալէ յետոյ՝ յարեց մօրաքեռորդիս՝ Ուոլիեսեր
բան մը չը խօսեցաք: Իրեն դէմ բարկացայ որ

խօսքն այսպէս անջրպետեց՝ ականատես ըլլալու համար մեր շիրթութեան, մեր շառագնութեան. բայց ինք զո՞հ կ'երեւէր որ իւր ռազմագիտութիւնն իրեն նպաստաւոր արդիւնք յառաջ բերած էր. Գո՞հ կ'երեւէր մանաւանդ թէ Գէորգ զիս կը սիրէր եւ թէ ես այդ սիրոյն անտարբեր չէի:

Ա՛հ, զիս միշտ այլ եւ այլ կերպերով կը չարչարէր մօրաքեռորդիս: Թերեւս գիտամար բաց թողած էր ինչ որ «իւր դազաղը» կը կոչէր. եւ այժմ որ ես իրմէն կը սոսկայի՝ իր մէջ սատանայ մը տեսնելով. եւ այժմ որ ես՝ յուսահատ իրմէն եւ սարսափած ալ իրմէն՝ կը հակէի բոլոր իղձերս հեղձուցանելու եւ պարզօրէն աշխարհք մտնելու, ահա կու գար նորէն զիս փորձել, կու գար հաստատել թէ ամեն մարդ սատանայ է, եւ թէ ինք աւելի սատանայ ըլլալով՝ աւելի արժանիք ունէր: Այո՛, հովանեակին մէջ դրախտին վրայ խօսք բացուեցաւ, կամ մանաւանդ ինք բացաւ. հարցուց թէ ի՞նչ կարծիք ունէինք մարդոյս բնածին բարութեան կամ չարութեան վրայ. նախ իմ կարծիքս ուզեցին եւ ես հաւատացօղ էի բնածին բարութեան. Գէորգ իմ կարծիքէս եղաւ բնականաբար. իսկ մօրաքեռորդիս ըսաւ թէ Սատանան ստեղծած է մարդս . . . «Աստուած ստեղծեց զմարդ» աղաղակեցի. «Բանաստեղծները քու պատգամներդ են, Վիզդուլա. երբ բանաստեղծի մը մէջ ցոյց տամ քեզ իմ խօսքս, դարձեա՛լ չը պիտի ընդունին թէ մարդս սատանածին է, սատանայ է.» — «Յոյց տօ՛ւր, եւ այն ատեն կ'ընդունիմ»: Այս խօսքիս վրայ է որ վաղեց վեր, եւ բերած գիրքն էր Պօտրէս: Երբ գիրքին վրայ հեղինակին անունը տեսայ, սարսուռ մը զգացի:

Վիզդուս իւկօ գրած է՝ գիտես՝ առ Պօտրլէո․ Գուր
նոր սարսուռն վը ստեղծեցիք։ Այդ նոր սարսուռը
կ'ունենամ, ամեն անգամ որ Պօտրլէոն անունը
տեղ մը տեսնեմ կամ լսեմ․ իսկ ինքը բնաւ չեմ
կարդար․ Մոռցած էի բոլորովին այդ դիւային դի-
ակնային բանաստեղծը, եւ համարձակեցայ հրա-
ւիրել մօրաքեոորդիս որ ինձ ցոյց տայ այդպիսի
հայհոյանք մը ընօղ բանաստեղծ։ Գիրքը բացաւ եւ
սկսաւ կարդալ․ «Մանկան ծիծաղը ծաղկան փթթ-
թում մ'է․․․» — «Այդ գիրքին ծածկոյթը Պօտր-
լէոնն է, գոչեցի ցնծութեամբ․ Գիրքը Վիզդուս
Իւկոյին կամ Լամառդինինն է․․․» — «Ուստի քե-
զի կարդալ անկ է։» Մօրաքեոորդուս ձեռքէն ա-
ռի սիրելի մատեանը․ Գէորգ բոլորովին սկանջ
կտրեցաւ․ երեքն ալ երկիւղածութեամբ մտիկ ըրին.
«Մանկանց ծիծաղն իբր փթթում մ'է ծաղկանց։
Գնծութիւնն է այն՝ ընդունելու, ցնծութիւնն է
չնչելու, ցնծութիւնն է բացուելու, ցնծութիւն՝
հայելու, ապրելու, մեծնալու։ Բոյսի ցնծութիւննն՝
է։» Հոս կանկ առի․ բանաստեղծութենէն իմաս-
տասիրութեան իջանք, նիւթապաշտ իմաստասիրու-
թեան ինկանք․ սկսած գտնուելով, պարտք համա-
րեցի շարունակել «Ուստի՝ ընդհանրապէս՝ ժպիտ
է մտնաւանդ քան ծիծաղ, շունց պոչին երերման
կամ կատուի մրմռին նման բան մ'է։» Գիրքը ձեռ-
քէս պիտի իյնար․ այս խօսքերը բանաստեղծի
գրչէ՞ երած են․ Լամառդինն այսպիսի բան պիտի
գրէր․ համբերութիւն ունեցայ աւարտելու․ «Եւ
ստակայն եթէ մանկան ծիծաղը կը տարբերի տա-
կաւին անասնական ուրախութեան արտայայտու-
թիւններէն, պատճառն այն է որ այդ ծիծաղը բո-
լորովին զերծ չէ փառասիրութենէ, որպէս անկ է
մարդու կտորներու, այսինքն նորատի Սասանա-

ներուն » Գէորգ յափշտակուած մնացած էր . կերեւի թէ ձայնս միայն լսած էր եւ գրքին խօսքերուն ուշադրութիւն չէր ըրած :

Գ .

Յետեւեալ օրը տուն դարձայ , ծնողացս քով , սիրելի կատուիս քով — զոր ոչ նուազ կարօտցած էի : Եունչ առի . մօրաքեռորդիս տիեզերք մ'էր որ վրաս կը ծանրանար իր բոլոր սքանչելեօքն եւ բոլոր արհաւրօքն : Այլ գիշերներն երազիս մէջ չէր թողուր զիս . կը տեսնէի մերթ զայն՝ որ մատս մատնի մը կը դնէր , մատնի մը՝ որ մատս ու բոլոր մարմինս կ'այրէր . մերթ գլուխը ծնգացս վրայ հանդուցած էր եւ կը տրտնջար թէ հոն ալ գլուխն իր հանգիստը չէր գտներ , եւ կը խնդրէր ինչ որ բանամ իր ճակատը եւ դուրս հանեմ հոնկէ այն երկաթեայ սեւ տառերը՝ զոր « Գերազօր քինախնդիր էակ մը՝ բոլոր մարդկութեան տեղ՝ զսգցես իմ ճակատիս վրայ դրոշմած է » կ'ըսէր . մերթ իւր լանջքը կը բանար եւ իւր սիրտը ձեռացս մէջ կը դնէր արիւննաթաթաւ . « Ժպտէ՛ ինձ » կ'աղերսէր , եւ ժպիտս սրտին բոլոր վէրքերը կը բուժէր :

Առուօտուն կատուիս շոյելով կը յիշէի գիշերուան երազներս . եւ երազոցս մէջ կ'երեւէր ինձ մօրաքեռորդւոյս բարեկամը՝ Գէորգն ալ . յաճախ կը տեսնէի զայն : Եւ . . . երանի կու տայի ծերունի հանիս , որ այլ եւս ոչ խռովիչ երազներ ունէր գիշերը՝ ոչ տենդալիւր ժառեր ցերեկը . զաւտկներն ու թոռները կը վայելէր , հաւերն ու կատուն կը մտածէր , եւ աղքատներուն իրիկուընէ մանրուք ու հաց կը սրատրաստէր : Կ'երանէի հանիս : Կ'երգնայի մերթ ինքզինքս բոլորովին անական հոգերու տալ , հաւերն ու աղքատները միայն մոմտալ , սեւ վարագոյր մը ձգել հայելիիս վրայ , ծաղիկ հասակիս վրայ , ու ծերունիի մը պէս ապրիլ այլ եւս յաւիտեան : Ի դ՛ուր , աւանդ . . . :

(Շարունակելի)

ՆՈՒՐԱՆԻՍ